ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2025 թվականի դեկտեմբերի 23-ին:

Նիստին մասնակցել են մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի բոլոր անդամները և տնօրենի ժ/պ՝ Ա. Գարեգինյանը:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Լ. Սեյրանյան)
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Ամանորյա միջոցառումներին աջակցության տրամադրման ամփոփում
4. 1-ին կիսամյակի աշխատանքների ամփոփում, կիսամյակային հաշվետվությունների ներկայացում

Լսեցին՝

1. Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի ղեկավար՝ Լ. Սեյրանյանը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը ներկայացրեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկույց, որտեղ նշվում էր դասալսումների ամփոփ նկարագիրը՝ դրական և բացասական դիտարկումները և «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» թեմայով վերապատրաստման դասընթացի ամփոփումը:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը ամփոփեց դպրոցում իրականացված միջոցառումները, փոխանցեց մանկավարժների շնորհակալությունը՝ նշելով, որ աջակցությունը եղել է արդյունավետ և նպաստել է երեխաների մասնակցությանը:

Լսեցին՝

4. Մ/մ յուրաքանչյուր անդամ ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվություն՝ յուրաքանչյուր սովորողի մասով, որոնք արտացոլված են ներկայացված հաշվետվությունների մեջ:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգ:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման մասին մ/մ ղեկավարի զեկույցը՝ իրականացված աշխատանքները համարելով արդյունավետ:

3. Մ/մ ղեկավար՝ Լ. Սեյրանյանն ամփոփեց արդյունքները՝ կատարված աշխատանքը համարելով արդյունավետ և որոշեցին ըստ անհրաժեշտության, հաջորդիվ ևս տրամադրել աջակցություն կազմակերպվող միջոցառումներին:
4. Մ/մ անդամերը որոշեցին 2-րդ կիսամյակում աշխատանքները կազմակերպել ըստ սահմանված աշխատանքային պլանի՝ ապահովելով ծրագրերի շարունակականությունը, արդյունավետ իրականացումը և նախատեսված արդյունքների ապահովումը:

Նախագահ՝ **Լ. Սեյրանյան**

Քարտուղար՝ **Գ. Եսայան**

24.11.2025